



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Հուլիսի երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հուլիսի երրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում, Արարատյան դաշտում՝ բարձր նորմայից 1-2 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 27-ին, 28-ին. Տավուշում գրանցվել է +31...+35°C Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +28...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +38...+40°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +35...+37°C, նախալեռնային շրջաններում՝ +27...+29°C, Շիրակում՝ +26...+30°C (Գյումրի՝ +32°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +26...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34°C, Գեղարքունիքում՝ +25...+28°C (Սեմյոնովկա՝+22°C), Լոռիում՝ +28...+31°C, Արմավիրում՝ +36...+38°C, Արարատում՝ +36...+38°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռններում՝ +32...+35°C (Աշտարակ՝ +38°C):


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 26-ին, 27-ին. Տավուշում +13...+18°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +17...+22°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Շիրակում՝ +7...+12°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +7...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+19°C, Գեղարքունիքում՝ +9...+12°C, Լոռիում՝ +9...+14°C, Արմավիրում՝ +17...+20°C, Արարատում՝ +18...+20°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +7...+11°C, նախալեռններում՝ +14...+18°C:

### Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 16-46մմ (119-294%), Լոռիում՝ 22-41մմ (117-282%), Տավուշում՝ 24-38մմ (144-279%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 31-55մմ (127-209%), նախալեռներում՝ 1-8մմ (19-80%), Գեղարքունիքում՝ 2-54մմ (10-240%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 9-19մմ (57-95%), նախալեռներում՝ 6մմ (73%), Արմավիրում՝ 10մմ (167%), Արարատում՝ մինչև 1մմ (3-15%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 14մմ (92%), նախալեռներում՝ 5մմ (138%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 5-7մմ (106%), նախալեռներում՝ 23-26մմ (213-291%):

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը




Հուլիսի երրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են +3...+8°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի նախալեռներում՝ +13...+17°C, Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +17... +19°C աստիճան:

**Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային փվյալների  
(հուլիսի երրորդ փասնօրյակ)**



Ըստ արբանյակային փվյալների՝ հանրապետության շրջանների մեծ մասում հուլիսի երրորդ փասնօրյակում վեգետացիոն ցուցիչը շարունակել է պահպանել իր առավելագույն արժեքը:

**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**





## **Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները**

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական մշակաբույսերի աճը, զարգացումը և դաշտային աշխատանքները: Նախալեռնային և հովտային շրջաններում կատարվել է պտղաբերության, հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի բերքահավաք:

## **Հացահատիկային մշակաբույսեր**

Առանձին լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը հասունացել են, կատարվել է բերքահավաք, մնացած լեռնային և նախալեռնային շրջաններում ցորենը գտնվել է մոմային հասունացման փուլում:

Հովտային շրջաններում կատարվել է բերքահավաք:

Նախալեռնային շրջաններում դիտվել է եգիպտացորենի կողրի ծաղկում, որոշ շրջաններում այն հասունացել է:





## **Պղղապուրներ, Խաղող**

Հովտային և նախալեռնային շրջաններում բազմամյա միջին ժամնեպներին մոտ սկսվել է խաղողի հասունացումը, շարունակվել պղղապուրների պտղի հասունացումը և բերքահավաքը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պղղապուրների և խաղողի հասունացման, ինչպես նաև շաքարային նյութերի կուտակման համար:

## **Բանջարանոցային մշակաբույսեր և կարտոֆիլ**

Առանձին լեռնային շրջաններում սկսվել, նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի հասունացումը: Կարտոֆիլի ծաղկումն ավարտվել է, սկսվել է պալարագոյացումը:

Հովտային շրջաններում կարտոֆիլ է բանջարանոցային մշակաբույսերի և ձմերուկի բերքահավաք:



## **Խոտաբույս, ծխախոտ**

Հովտային շրջաններում դիտվել է առվույտի ցողունի աճ երկրորդ հունձից հետո, լեռնային շրջաններում շարունակվել է կորնգանի ցողունի աճը:

Նախալեռնային շրջաններում դիտվել է ծխախոտի տերևների հասունացում:



Ծխախոտ